



ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
(ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ -2017)

ԵՐԵՎԱՆ 2017

Հաշվետվությունը մշակվել և կազմվել է Ուսումնամեթոդական կենտրոնի Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի կողմից

Շահակիցների անկետավորում և արդյունքների մուտքագրում	Լ. Նավասարդյան Ա. Կարաուստայան ՀԱԱՀ ուսանողներ
---	--

Տվյալների վերլուծություն և ամփոփում	Ս. Կոսեմյան
-------------------------------------	-------------

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Հետազոտության ընդհանուր նկարագիր	3
2.	Հետազոտության անցկացման մեթոդաբանություն	3
2.1.	1-ին կուրսի ուսանողների կարիքների բացահայտում և գնահատում	4
2.2.	Շրջանավարտների կարիքների բացահայտում և գնահատում	14
3.	Ընդհանուր եզրակացություններ և առաջարկություններ	43
4.	Հավելվածներ	44

1. Հետազոտության ընդհանուր նկարագիր

2017 թ.-ի փետրվար-մարտ ամիսներին Ուսումնամեթոդական կենտրոնի Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի կողմից իրականացվել է համալսարանի շահակից կողմերի շրջանում կարիքների բացահայտման գործընթաց: Կարիքների բացահայտումը իրականացվել է նախապես մշակված և վալիդացված անկետաների միջոցով:

Տվյալ հետազոտության մեջ որպես շահակից կողմեր են հանդես եկել՝

- Բակալավրի 1-ին կուրսի ուսանողները,
- ՀԱԱՀ շրջանավարտները:

Հետազոտության նպատակն է ստանալ ամբողջական պատկերացում շահակիցների բավարարվածության մակարդակի վերաբերյալ Համալսարանի կրթական միջավայրից և կրթության որակից:

Հարցումը իրականացվել է համաձայն ՀԱԱՀ ռեկտորի կողմից տրված հրամանի (№ 14/ՄԾ, 10.02.2017), որում ներգրավված են եղել Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի աշխատակազմը, ինչպես նաև բակալավրի և մագիստրատուրայի ուսանողները:

Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժնի կողմից հարցում անցկացնող ուսանողների շրջանում իրականացվել է խորհրդատվություն, բացատրվել են հարցման իրականացման նրբությունները:

2. Հետազոտության անցկացման մեթոդաբանություն

Հետազոտության իրականացման համար կատարվել է համալսարանի շահակից կողմերի կրթության որակից բավարարվածության մակարդակի մշտադիտարկում:

Մշտադիտարկումը ինֆորմացիայի համակարգված հավաքագրումն ու մշակումն է, որը կարող է օգտագործվել ուսումնասիրվող գործընթացի բարելավման համար, և օգտագործվում է որպես շահակիցների հետ հետադարձ կապի գործիք նոր նախագծերի մշակման, կրթական ծրագրերի և կրթական ծառայությունների գնահատման և ռազմավարության վերանայման և բարելավման համար:

Կրթական ծառայությունների որակի մշտադիտարկումը և գնահատումը կազմված է հետևյալ փուլերից՝

1. Տարբեր կատեգորիաների շահակիցների բավարարվածության մշտադիտարկում:
2. Մշտադիտարկման արդյունքների մշակում, ներկայացում և վերլուծություն, հաշվետվությունների և առաջարկությունների պատրաստում:
3. Շահագրգիռ կողմերի տեղեկացում կարիքների գնահատման արդյունքների վերաբերյալ:

Մշտադիտարկվող տվյալների հավաքագրումը իրականացվել է հարցումների տեսքով:

Չափման և մշտադիտարկման առարկան՝

- Տեղեկատվության ապահովման մակարդակը և բավարարվածությունը կրթություն-
նից 1-ին կուրսի ուսանողների շրջանում,
- Կրթության որակից շրջանավարտների բավարարվածության մակարդակը:

Տվյալների հավաքագրումը իրականացվել է ըստ նախապես մշակված պլանի և ձևաչա-
փերի:

Մշտադիտարկման արդյունքում նախատեսվում են ուղղիչ գործողություններ և
նախագգուշացնող գործողություններ, որոնք համարվում են որակի բարձրացման
գործընթացի բաղադրիչ մասը:

Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման մեթոդաբանության
ընդանրացված նկարագրությունը ներկայացվում է ձևաչափի միջոցով՝ ըստ քայլերի
հաջորդականության:

Արդյունքների մուտքագրումը և մշակումը իրականացվել է SPSS վիճակագրական վեր-
լուծության ծրագրի միջոցով:

2.1. Առաջին կուրսի ուսանողների կարիքների գնահատում (2017 թ.)

ՀԱԱՀ Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման և նորագույն
տեխնոլոգիաների բաժնի տարեկան պլանի համաձայն 2017 թ.-ի փետրվար-մարտ
ամիսներին, ՀԱԱՀ ռեկտորի կողմից տրված հրամանի համաձայն իրականացվել է
համալսարանի բակալավրիատի 1-ին կուրսի ուսանողների շրջանում հարցում:

Ընտրանք


ՀԱԱՀ բակալավրի 1-ին կուրսի ուսանողների թիվը ըստ
ելակետային տվյալների կազմել է 650 ուսանող (գլխավոր հա-
մակցություն):

*Ընտրանքային համակցությունը կազմել է 435 ուսանող,
վստահելի հավանականությունը (ճշտությունը)՝ 95%, վստա-
հելի միջակայքը (սխալանքը)՝ 4%:*

Հարցման նպատակն էր՝

1. բացահայտել ուսանողների կարիքները,
2. բացահայտել ուսանողների տեղեկացվածության
մակարդակը,
3. գնահատել և վերլուծել ուսանողների կարիքները:

Հարցմանը մասնակցել են ՀԱԱՀ յոթ ֆակուլտետներից 1-ին կուրսի շուրջ 435 ուսանող,
որոնցից 303-ը՝ արական, 132-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ:




Նկ. 1. Հարցմանը մասնակից 1-ին կուրսեցիների թիվը:

Աղյուսակ 1

**Ընտրանքի կառուցվածքը:
Հարցվածների բաշխումն ըստ ֆակուլտետների**

Ֆակուլտետ	Ուսանողների թիվը
Ագրոնոմիական	69
Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության	85
ԳՄ և ԱՏ	34
Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի	35
Տնտեսագիտական	51
Ագրոբիզնեսի և շուկայաբանության	22
Պարենամթերքի տեխնոլոգիաների	139
Ընդհանուր թիվը	435



Նկ. 2. Հարցվածների բաշխումն ըստ ֆակուլտետների:

Հարցման թերթիկում առկա հարցերի տեսակներն էին՝

- փակ հարցեր – 5,
- կիսափակ հարցեր- 7,
- բաց հարցեր – 1:


Հարցերը բաշխված են հետևյալ խմբերի՝

- ❖ տեղեկատվության ապահովման աղբյուրներ,
- ❖ փաստաթղթերի ընդունման գործընթացի արդյունավետությունը,
- ❖ համալսարանը և մասնագիտությունը ընտրելու, ընդունվելու շարժառիթները,
- ❖ համալսարանի գրավչությունը:

➤ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


❖ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

«Խնդրում ենք նշել, տեղեկատվության ի՞նչ աղբյուրներից եք իմացել համալսարանի մասին» հարցին հարցվածներից 53.1%-ը նշել է ծնողներից, 23.9%-ը՝ համալսարանում սովորող ուսանողներից, 12.4%-ը նշել են համալսարանի ներկայացուցչից, 10.1%-ը՝ համալսարանի կայք էջից, 9.9%-ը՝ դպրոցի գովազդային ցուցափեղկից, 2.3%-ը նշել է այլ պատասխան, 1.6%-ը՝ թերթի գովազդային տեղեկատվությունից:



Նկ. 3.

«Մասնագիտությունների, ընդունելության ու ուսուցման պայմանների մասին որ տեղեկատվական աղբյուրներից եք իմացել» հարցին հարցվածների 54.7%-ը պատասխանել է՝ ընդունող հանձնաժողովից, 30.3%-ը նշել է համալսարանի կայք էջից, 14%-ը՝ ֆակուլտետների դեկաններից, 1.8%-ը՝ այլ աղբյուրներից (Կրթության և գիտության նախարարություն, դիմորդի գիրք):




Նկ. 4.

❖ **ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ**

Փաստաթղթերի ընդունման կազմակերպումը հարցին պատասխանած 429 ուսանողներից 125-ը (29.14%) գնահատել են գերազանց, 213-ը (49.65%)՝ լավ, 73-ը (17.02%)՝ բավարար, և, ընդամենը 10-ը (1.86%)՝ անբավարար:


Հնդունող հանձնաժողովի անդամների կողմից վերաբերմունքը դիմորդի նկատմամբ հարցվածներից 424-ն են գնահատել, ընդ որում դրանցից 41.27%-ը գնահատել են գերազանց, 45.99%-ը՝ լավ, 8.25%-ը՝ բավարար, 3.07%-ը՝ անբավարար, 1.42% -ը դժվարացել է պատասխանել տվյալ հարցին:



Նկ. 5

❖ **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ, ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ**

Հարցված ուսանողներից 400-ը նշել է, որ առաջին հայտով նշել են ՀԱԱՀ-ն, իսկ 33-ը՝ այլ բուհ:




Նկ. 6.

Այլ բուհեր՝

- Հայ-ռուսական Սլավոնական համալսարան,
- Ֆրանսիական համալսարան,
- Պոլիտեխնիկական համալսարան,
- Բժշկական համալսարան,
- Երևանի պետական համալսարան,
- Երևանի պետական տնտեսագիտական համալսարան,
- Վազգեն Սարգսյանի ռազմական ինստիտուտ,
- Մանկավարժական համալսարան:

«Խնդրում ենք նշել, թե ինչո՞ւ եք որոշել սովորել ՀԱԱՀ-ում» հարցին տրվել են պատասխաններ՝

- | | |
|--|-------|
| ▪ Համալսարանը բնակավայրին մոտ է գտնվում | 2.8% |
| ▪ Համալսարանում տալիս են բարձրորակ կրթություն | 11.3% |
| ▪ Ծնողներն են որոշել | 8.7% |
| ▪ Գյուղատնտեսական ոլորտի մասնագիտությունով ուսուցման համար | 17.2% |
| ▪ Համալսարանում կան մասնագիտություններ, որոնք հետաքրքրում են ինձ | 33.6% |
| ▪ Վարձավճարը ավելի ցածր է | 4.6% |
| ▪ Ավելի հեշտ է ընդունվել, քան այլ համալսարան | 26.2% |
| ▪ Այլ պատճառ | 4.1% |




Նկ. 7.

Այլ պատճառներ՝

- հանգամանքների բերումով,
- մասնագիտությունը հետաքրքիր է և կարևոր,
- ատեստատի գնահատականով ընդունվելու հնարավորության պատճառով,
- բանակից ազատվելու պատճառով,
- անասնաբուժ դառնալու նպատակով,
- անվճար սովորելու հնարավորության պատճառով,
- քանի որ ՀԱԱՀ-ն գերազանց համալսարան է,
- քանի որ համալսարանը համագործակցում է մի շարք այլ երկրների համալսարանների հետ:

«Խնդրում եմ նշեք, թե ինչո՞ւ եք ընտրել այն մասնագիտությունը, որտեղ ընդունվել եք» հարցին պատասխանել են՝

- | | |
|--|-------|
| ▪ մասնագիտությունը հեղինակավոր է | 17.5% |
| ▪ ծնողներն են խորհուրդ տվել | 14.9% |
| ▪ մասնագիտությունը թույլ է տալիս բարձր վարձատրվող աշխատանք ունենալ | 29.2% |
| ▪ ծանոթներս են խորհուրդ տվել | 17.0% |
| ▪ ավելի հեշտ է եղել հանձնել ընդունելության քննությունները | 18.2% |
| ▪ այլ պատասխան | 4.6% |



Նկ. 8.


Այլ պատասխան՝

- ագրարային ոլորտը հեռանկարային է և հետագայում բարձր վարձատրվող աշխատանք կարելի է գտնել,
- տվյալ ոլորտում մասնագետների պակասի պատճառով,
- մասնագիտությունների հետաքրքիր լինելու պատճառով,
- ծնողների կամքով,
- պատահականության սկզբունքով:

❖ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ

«Համալսարանում Ձեզ ի՞նչն է դուր գալիս» հարցին ուսանողները պատասխանել են՝

- | | |
|--------------------------------|-------|
| ▪ դասավանդողները | 36.1% |
| ▪ պարապմունքների անցկացման ձևը | 22.1% |
| ▪ համալսարանի ծառայությունները | 14.5% |
| ▪ համալսարանի դրվածքը | 31.0% |
| ▪ այլ | 7.8% |




Նկ. 9.

Այլի տակ նշվել են հետևյալ պատասխանները՝

- կուրսեցիները,
- բուֆետը,
- ավտոկայանատեղին,
- Լեզվի կենտրոնը,
- դեկանի աշխատանքը,
- համալսարանում անցկացվող պարապմունքների որակը,
- քիմիայի ամֆիոնը:


«Ուսուցման ավարտին ի՞նչ կուզենայիք ստանալ» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝

- | | |
|--|-------|
| ▪ տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ | 42.3% |
| ▪ ուղղակի դիպլոմ | 10.8% |
| ▪ ապագայում աշխատանք ունենալու հնարավորություն | 54.3% |
| ▪ այլ | .7% |




Նկ. 10.

«Արդյոք կարևորո՞ւմ եք համալսարանում սովորելիս հանրակացարանի առկայության խնդիրը» հարցին պատասխանածներից 52.67%-ը նշել են այո, 47.33%-ը՝ ոչ:



Նկ. 11.


«Արդյոք հասանելի՞ է ձեզ ՀԱԱՀ ընդունվելու և սովորելու վերաբերյալ ինֆորմացիան» հարցին պատասխանածներից 91.28%-ը նշել է այո, 8.72%-ը՝ ոչ:



Նկ. 12.

Համալսարան ընդունվելիս տեղեկատվության ո՞ր ձևն է եղել ավելի արդյունավետ՝

- | | |
|---|-------|
| ▪ գովազդը հեռուստացույցով | 16.1% |
| ▪ տեղեկատվությունը թերթերի միջոցով | 5.1% |
| ▪ համացանցի տեղեկատվությունը | 26.7% |
| ▪ համալսարանի կայքի տեղեկատվությունը | 24.1% |
| ▪ համալսարանի կողմից կազմակերպվող բաց դռների օրը | 11.0% |
| ▪ համալսարանի ներկայացուցչի հետ հանդիպումը ձեր դպրոցում | 24.8% |



Նկ. 13.

2.2. Շրջանավարտների բավարարվածությունը կրթության որակից

2017 թ.-ի մարտ-մայիս ամիսներին իրականացվել է հարցում համալսարանի շրջանավարտների շրջանում:


Անկետավորման գործընթացին մասնակցել են շուրջ 431 շրջանավարտ, որոնցից 215-ը արական սեռի ներկայացուցիչներ էին, 216-ը՝ իգական:

Հարցման նպատակն էր բացայտել և գնահատել համալսարանի շրջանավարտների բավարարվածության մակարդակը կրթության որակից:

Աղ. 1

Հարցման մասնակիցները ըստ ֆակուլտետների և սեռի


Ֆակուլտետ	Հարցման մասնակիցները ըստ սեռի		Ընդամենը
	արական	իգական	
Տնտեսագիտական	61	85	146
Ագրոբիզնես և շուկայաբանություն	52	75	127
Ագրոնոմիական	8	16	24
ԳՄ և ԱՏ	33	4	37
Տեխնոլոգիական	20	21	41
ՀՀ և ՀՇ	25	3	28
Անասնաբուժական	16	12	28
Ընդամենը	215	216	431



Նկ. 1.

«Ի՞նչ չափով եք բավարարված ՀԱԱՀ-ի կողմից տրված կրթությունից» հարցին հարցվածների 41,8%-ը նշել է, որ ամբողջությամբ բավարարված է, 50,3%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 4,2%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, 1,6%-ը՝ բավարարված չէ, իսկ 2,1%-ը դժվարանում է պատասխանել:

1.Ի՞նչ չափով եք բավարարված ՀԱԱՀ-ի կողմից տրված կրթությունից							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	5	19	0	0	0	24
	ԱՇ	50	63	9	1	4	127
	Անասնաբուժական	10	17	0	1	0	28
	ԳՄ և ԱՏ	11	18	1	1	0	31
	ՀՀ և ՀՇ	23	6	2	3	0	34
	Տեխնոլոգիական	24	15	2	0	0	41
	Տնտեսագիտական	57	79	4	1	5	146
Ընդամենը		180	217	18	7	9	431



Նկ. 2.

Համալսարանի կողմից տրված կրթության վերաբերյալ շրջանավարտների կողմից տրվել են հետևյալ մեկնաբանությունները՝

Ագրոնոմիական ֆակուլտետ

- Ուսանողները ստացել են բավարար գիտելիքներ, բավարարված են կրթությունից բայց ոչ ամբողջովին, քանի որ կա որոշ ծրագրերի թարմացման կարիք, ուս. տարիների ընթացքում եղել են թերություններ:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԱԱՀ միակ համալսարանն է, որ կարելի է սովորել գյուղատնտեսություն, ուրախ են, որ սովորում և ավարտում են ՀԱԱՀ-ն, սակայն առաջարկվում է դասերը լինեն ավելի ճկուն՝ ուսանողի ընտրմամբ, շատ լինեին պրակտիկաները:
- Ամբողջությամբ բավարարված են կրթությունից, քանի որ տրվում է բարձր մակարդակի, միջազգային չափանիշներին համապատասխանող կրթություն, ձեռք են բերել մեծ ծավալով մասնագիտական գիտելիքներ:


Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	▪ Ուսանողները լիարժեք կրթություն են ստացել, ձեռք են բերել բավարար տեսական գիտելիքներ հետազայում մասնագիտական ուղղվածությամբ օգտագործելու համար՝ շնորհիվ (անասնաբուժական ֆակուլտետի) դասախոսական կազմի: ▪ Ուսումնական գործընթացը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Ուսանողից պահանջվում է ավելին, քան տրվում է:
Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ	▪ Ուսանողները ստացած կրթությունից բավարարված են, որը տրվել է մատչելի, ուսանողին հասանելի ձևով, սակայն ուսուցման ժամանակակից մեթոդները դասախոսներից շատ քչերն են օգտագործում: ▪ Ցանկալի է թեորապես ուսուցանվածը կիրառվեր նաև պրակտիկայի ընթացքում, լինել պրակտիկ ուսուցման մեթոդիկա:
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	▪ Ուսանողները բավարարված են ստացած կրթությունից, որը տրվել է մատչելի, մանրակրկիտ ձևով, հատկապես մասնագիտական առարկաները, ձեռք են բերել մասնագիտական գիտելիքների մեծ բազա, հետազայում աշխատանք գտնելու համար: ▪ Ցանկալի է ստացած մասնագիտական տեսական գիտելիքները գործնական պարապմունքներին կիրառել: Ամեն դեպքում, լավ կրթություն ստանալու համար մեծ դեր է խաղում ուսանողի աշխատասիրությունը:
Տնտեսագիտական ֆակուլտետ	▪ Ուսանողները բավարարված են ՀԱԱՀ-ի կրթական համակարգից, քանի որ ունեն և տեսական, և պրակտիկ գիտելիքներ, և կա անհրաժեշտ պայմաններ լավ մասնագետներ պատրաստելու համար, սակայն ինչպես բոլոր համակարգերը, այնպես էլ ՀԱԱՀ-ի կրթական համակարգը ունի որոշակի թերություններ: ▪ Կարող է ավելի լավ և ամբողջական լինել ուսուցումը, ներառելով ավելի ժամանակակից գործնական նյութեր: ▪ Կային առարկաներ, որոնք կարևոր են եղել, սակայն տրված գիտելիքը քիչ է եղել: ▪ Պրակտիկ դասընթացները քիչ են եղել ստացած գիտելիքները գործնականորեն կիրառելու համար: ▪ Ցանկալի կլինել պրակտիկ ուսուցումը լինել ավելի

	խորացված և հագեցված ժամանակակից փորձով:
ԳՄ և ԱՏ ֆակուլտետ	Ստացված կրթությունից բավարարված են, ուսուցումը եղել է լավ կազմակերպված, ստացել են բավականաչափ գիտելիքներ:
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ	- ՀԱԱՀ-ում ստացված կրթությունը գրեթե բավարարում է շուկայի պահանջներին, այն եղել է մատչելի և ուսանողները ձեռք են բերել համապատասխան մասնագիտական գիտելիքներ, չնայած կրթության որակը բարելավման կարիք ունի: - Գործնական գիտելիք ստանալու մակարդակը ցածր է, քանի որ պրակտիկաները չեն անցկացվում հավուր պատշաճի, կարելի է կատարել բարելավում՝ պրակտիկաների առումով և ուսուցման մեթոդիկան ավելի պրակտիկ դարձնել, ավելացնել փորձացուցադրական աշխատանքների քանակը: - Պրակտիկաները լավ և արդյունավետ չեն կատարվում՝ կապված մասնագիտական տեղեկատվության գաղտնիության հետ:

❖ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑՎԱԾ ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՑ

«Որքանով եք բավարարված ստացված տեսական գիտելիքների արդիականությամբ» հարցին հարցվածների 42,9%-ը նշել է, որ ամբողջությամբ բավարարված է, 45,5%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 7,9%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ:


3. Որքանով եք բավարարված ստացված տեսական գիտելիքներից							
3.1. Տեսական գիտելիքների արդիականությամբ							
		Ամբողջությամբ բավարարված են	Ավելի շուտ բավարարված են	Ավելի շուտ բավարարված չեն	Բավարարված չեն	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	5	18	1	0	0	24
	ԱՇ	58	48	19	1	1	127
	Անասնաբուժական	16	10	0	2	0	28
	ԳՄ և ԱՏ	11	17	2	1	0	31
	ՀՀ և ՀՇ	20	12	2	0	0	34
	Տեխնոլոգիական	20	16	3	2	0	41
	Տնտեսագիտական	55	75	7	4	5	146
	Ընդամենը	185	196	34	10	6	431



Նկ. 3.

«Որքանով եք բավարարված ստացված տեսական գիտելիքների համապատասխանությամբ ստացվող որակավորմանը» հարցին հարցվածների 41,3%-ը ամբողջությամբ բավարարված է, 46,4%-ը՝ ավելի շուտ բավարարված է, իսկ 8,6%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, բավարարված չէ՝ 1,85%-ը, և դժվարանում է պատասխանել՝ 1,85%-ը:

3.2. Տեսական գիտելիքների համապատասխանությամբ ստացվող որակավորմանը							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	6	18	0	0	0	24
	ԱՇ	57	53	14	2	1	127
	Անասնաբուժական	15	11	1	1	0	28
	ԳՄ և ՍՏ	13	13	4	1	0	31
	ՀՀ և ՀՀ	21	9	2	1	1	34
	Տեխնոլոգիական	21	16	4	0	0	41
	Տնտեսագիտական	45	80	12	3	6	146
	Ընդամենը	178	200	37	8	8	431



Նկ. 4.


«Որքանով եք բավարարված ստացված տեսական գիտելիքների կիրառման կարողությամբ մասնագիտական գործունեության մեջ» հարցին հարցվածների 39,7%-ը նշել է, որ ամբողջությամբ բավարարված է, 42,9%-ը՝ ավելի շուտ բավարարված է,

11,8%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, 4,4%-ը՝ բավարարված չէ, իսկ 1,2%-ը՝ դժվարանում է պատասխանել:

Հարցվածներից ընդհանուր 16,2%-ը բավարարված չէ մասնագիտական գործունեության մեջ տեսական գիտելիքների կիրառման կարողությամբ:

Վերլուծությունը ըստ առանձին ֆակուլտետների ցույց է տրված աղյուսակում:

3.3. Տեսական գիտելիքների կիրառման կարողությամբ մասնագիտական գործունեության մեջ							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	5	16	2	1	0	24
	ԱՇ	46	57	19	4	1	127
	Անասնաբուժական	18	9	1	0	0	28
	ԳՄ և ԱՏ	12	13	4	2	0	31
	ՀՀ և ՀՇ	20	12	1	1	0	34
	Տեխնոլոգիական	21	12	4	4	0	41
	Տնտեսագիտական	49	66	20	7	4	146
	Ընդամենը	171	185	51	19	5	431




Նկ. 5.

❖ **ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՐ**

«Որքանով եք բավարարված գործնական հմտությունների արդիականությամբ» հարցին հարցվածների 36,9%-ը ամբողջությամբ բավարարված է, 45,2%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 12,1%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, իսկ 5,3%-ը՝ բավարարված չէ:

4. Որքանով եք բավարարված գործնական պատրաստվածությամբ ուսումնառության ընթացքում							
4.1. Գործնական հմտությունների արդիականությամբ							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	5	13	4	2	0	24
	ԱՇ	42	62	16	7	0	127
	Անասնաբուժական	14	10	2	2	0	28
	ԳՄ և ՍՏ	10	16	4	1	0	31
	ՀՀ և ՀՇ	22	9	2	1	0	34
	Տեխնոլոգիական	20	17	3	1	0	41
	Տնտեսագիտական	46	68	21	9	2	146
Ընդամենը		159	195	52	23	2	431



Նկ. 6.

«Որքանով եք բավարարված որակավորման համապատասխանությամբ աշխատանքային պահանջներին» հարցին հարցվածների 35,7%-ը ամբողջությամբ բավարարված է, 46,4%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 11,6%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, 5,3%-ը բավարարված չէ, իսկ 0,9%-ը՝ դժվարանում է պատասխանել:

4.2. Որակավորման համապատասխանությամբ աշխատանքային պահանջներին							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	6	11	5	2	0	24
	ԱՇ	39	68	14	6	0	127
	Անասնաբուժական	15	10	1	2	0	28
	ԳՄ և ՍՏ	10	15	5	1	0	31
	ՀՀ և ՀՇ	22	8	2	2	0	34
	Տեխնոլոգիական	20	14	3	2	2	41
	Տնտեսագիտական	42	74	20	8	2	146
Ընդամենը		154	200	50	23	4	431




Նկ. 7.

«Որքանով եք բավարարված գործնական խնդիրների ինքնուրույն լուծման կարողությամբ» հարցին հարցվածների 39,2%-ը ամբողջությամբ բավարարված է, 48,3%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 7,7%-ը ավելի շուտ բավարարված չէ, 4,6%-ը՝ բավարարված չէ, իսկ 0,2%-ը՝ դժվարանում է պատասխանել:

Ուսումնառության ընթացքում գործնական պատրաստվածության հարցին հարցվածների 12,3%-17,4%-ը բավարարված չեն եղել, որը երևում է ըստ ֆակուլտետների առանձին աղյուսակներում (4.1., 4.2., 4.3.):

4.3. Գործնական խնդիրների ինքնուրույն լուծման կարողությամբ							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	7	12	4	1	0	24
	ԱՇ	44	66	11	6	0	127
	Անասնաբուժական	16	9	2	1	0	28
	ԳՄ և ՍՏ	8	19	3	1	0	31
	ՀՀ և ՀՇ	23	9	1	1	0	34
	Տեխնոլոգիական	22	16	2	1	0	41
	Տնտեսագիտական	49	77	10	9	1	146
	Ընդամենը	169	208	33	20	1	431




Նկ. 8.

**❖ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ԱՆՁՆԱՅԻՆ և ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻՑ**

«Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ձևավորված ինքնակազմակերպման հմտությամբ» հարցին հարցվածների 49,4%-ը պատասխանել է, որ ամբողջությամբ բավարարված է, 41,5%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 7,7%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, 0,9%-ը՝ բավարարված չէ, իսկ 0,5%-ը դժվարանում է պատասխանել:


5. Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ձևավորված անձնային և մասնագիտական որակներից							
5.1. Ինքնակազմակերպման հմտությամբ							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	11	13	0	0	0	24
	ԱՇ	59	52	13	2	1	127
	Անասնաբուժական	19	8	1	0	0	28
	ԳՄ և ՍՏ	13	14	3	1	0	31
	ՀՀ և ՀՇ	25	7	2	0	0	34
	Տեխնոլոգիական	25	16	0	0	0	41
	Տնտեսագիտական	61	69	14	1	1	146
Ընդամենը		213	179	33	4	2	431



Նկ. 9.

«Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ձևավորված գործունեություն ինքնակրթման և վերլուծության ձգտումով» հարցին հարցվածների 47,6%-ը նշել է, որ ամբողջությամբ բավարարված է, 43,1%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 7,9%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, 0,9%-ը՝ բավարարված չէ, իսկ 0,5%-ը դժվարանում է պատասխանել:

5.2. Գործունեության ինքնակրթման և վերլուծության ձգտումով							
		Ամբողջությամբ բավարարված են	Ավելի շուտ բավարարված են	Ավելի շուտ բավարարված չեն	Բավարարված չեն	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	11	10	3	0	0	24
	ԱՇ	53	64	9	0	1	127
	Անասնաբուժական	18	9	1	0	0	28
	ԳՄ և ՍՏ	11	17	2	1	0	31
	ՀՀ և ՀՇ	25	7	2	0	0	34
	Տեխնոլոգիական	28	10	0	3	0	41
	Տնտեսագիտական	59	69	17	0	1	146
Ընդամենը		205	186	34	4	2	431




Նկ. 10.

❖ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՅՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՑ

«Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ստացված ինովացիոն մեթոդների և տեխնոլոգիաների տիրապետումով» հարցին հարցվածների 32,3%-ը՝ պատասխանել է, որ ամբողջությամբ բավարարված է, 42,2%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 17,2%-ը ավելի շուտ բավարարված չէ, 7,2%-ը՝ բավարարված չէ, իսկ 1,2%-ը՝ դժվարանում է պատասխանել:


6. Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ստացված լրացուցիչ գիտելիքներից							
6.1. Ինովացիոն մեթոդների և տեխնոլոգիաների տիրապետումով							
		Ամբողջությամբ բավարարված են	Ավելի շուտ բավարարված են	Ավելի շուտ բավարարված չեն	Բավարարված չեն	ԴՊ	
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	4	11	7	1	1	24
	ԱՇ	38	53	26	9	1	127
	Անասնաբուժական	12	12	1	3	0	28
	ԳՄ և ՍՏ	11	16	3	1	0	31
	ՀՀ և ՀՇ	21	9	1	2	1	34
	Տեխնոլոգիական	12	19	8	1	1	41
	Տնտեսագիտական	41	62	28	14	1	146
Ընդամենը		139	182	74	31	5	431



Նկ. 11.

«Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ստացված տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումով» հարցին հարցվածների 34,3%-ը ամբողջությամբ բավարարված է, 42,5%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 17,1%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, 5,6%-ը՝ բավարարված չէ, իսկ 0,5%-ը՝ դժվարանում է պատասխանել:

6.2. Տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումով							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	4	12	6	1	1	24
	ԱՇ	41	52	24	9	1	127
	Անասնաբուժական	11	13	2	2	0	28
	ԳՄ և ՍՏ	12	15	3	1	0	31
	ՀՀ և ՀՀ	21	10	3	0	0	34
	Տեխնոլոգիական	11	19	10	1	0	41
	Տնտեսագիտական	48	62	26	10	0	146
	Ընդամենը	148	183	74	24	2	431




Նկ. 12.

«Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ստացված լեզվական կարողությունների դրսևորումով» հարցին հարցվածների 36,9%-ը պատասխանել է, որ ամբողջությամբ բավարարված է, 42,2%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 14,4%-ը՝ ավելի

շուտ բավարարված չէ, 5,8%-ը՝ բավարարված չէ, իսկ 0,7%-ը՝ դժվարանում է պատասխանել:

6.3. Լեզվական կարողությունների դրսևորումով							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	4	13	5	1	1	24
	ԱՇ	47	56	17	7	0	127
	Անասնաբուժական	11	14	2	1	0	28
	ԳՄ և ՍՏ	11	15	4	1	0	31
	ՀՀ և ՀՇ	22	9	1	1	1	34
	Տեխնոլոգիական	17	14	7	3	0	41
	Տնտեսագիտական	47	61	26	11	1	146
	Ընդամենը	159	182	62	25	3	431




Նկ. 13.

«Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ստացված ընդհանուր օրենսդրական, տնտեսագիտական գիտելիքներով» հարցին հարցվածների 37,1%-ը պատասխանել է, որ ամբողջությամբ բավարարված է, 48,5%-ը՝ ավելի շուտ բավարարված է, 10,4%-ը՝ ավելի շուտ բավարարված չէ, 2,8%-ը՝ բավարարված չէ, իսկ 1,2%-ը դժվարանում է պատասխանել:

Ուսումնառության ընթացքում ստացված լրացուցիչ գիտելիքներից հարցվածներից 13,2%-24,4%-ը բավարված չեն եղել, որը ըստ առանձին ֆակուլտետների երևում է աղյուսակներում (6.1., 6.2., 6.3., 6.4.):

6.4. Ընդհանուր օրենսդրական, տնտեսագիտական գիտելիքներով							
		Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	5	13	4	1	1	24
	ԱՇ	42	68	14	3	0	127
	Անասնաբուժական	12	16	0	0	0	28
	ԳՄ և ՍՏ	13	14	3	1	0	31
	ՀՀ և ՀՇ	20	9	2	3	0	34
	Տեխնոլոգիական	15	21	4	1	0	41
	Տնտեսագիտական	53	68	18	3	4	146
	Ընդամենը	160	209	45	12	5	431




Նկ. 14.

❖ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մասնագիտության կրթական ծրագրերի իրականացումը (կրթական ծրագրեր, լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաններ, ուսումնառության այլ ռեսուրսներ) հարցվածների 36,2%-ը գնահատել է գերազանց, 44,1%-ը՝ լավ, 15,5%-ը՝ բավարար, 3,2%-ը՝ անբավարար, 0,9%-ը՝ դժվարացել է պատասխանել:


7. Ինչպես եք գնահատում ուսումնական գործընթացի կազմակերպման նյութատեխնիկական բազան							
7.1. Մասնագիտության կրթական ծրագրի իրականացման ընդհանուր միջին գնահատական (կրթական ծրագրեր, լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաններ, ուսումնառության այլ ռեսուրսներ)							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ազրոնոմիական	4	18	2	0	0	24
	ԱՇ	48	56	18	4	1	127
	Անասնաբուժական	8	12	6	2	0	28
	ԳՄ և ԱՏ	13	11	6	1	0	31
	ՀՀ և ՀՀ	20	12	2	0	0	34
	Տեխնոլոգիական	15	16	9	0	1	41
	Տնտեսագիտական	48	65	24	7	2	146
	Ընդամենը	156	190	67	14	4	431



Նկ. 15.

Գրականության առկայությունը համալսարանի գրադարաններում շրջանավարտների 52,7%-ը գնահատել է գերազանց, 38,5%-ը՝ լավ, 6,7%-ը բավարար, 1,9%-ը՝ անբավարար, իսկ 0,2%-ը՝ դժվարացել է պատասխանել այդ հարցին:


7.2. Գրականության առկայությունը գրադարաններում							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	16	8	0	0	0	24
	ԱՇ	64	49	12	2	0	127
	Անասնաբուժական	17	8	3	0	0	28
	ԳՄ և ՍՏ	11	17	2	1	0	31
	ՀՀ և ՀՇ	24	9	0	1	0	34
	Տեխնոլոգիական	22	18	1	0	0	41
	Տնտեսագիտական	73	57	11	4	1	146
	Ընդամենը	227	166	29	8	1	431



Նկ. 16.

Համակարգիչների առկայությունը համալսարանում հարցվածների 39%-ը գնահատել է գերազանց, 37,1%-ը՝ լավ, 17%-ը՝ բավարար, 6%-ը՝ անբավարար, իսկ 0,9%-ը՝ դժվարացել է պատասխանել:

7.3. Համակարգիչների առկայությունը							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	11	9	4	0	0	24
	ԱՇ	45	47	28	7	0	127
	Անասնաբուժական	12	10	3	2	1	28
	ԳՄ և ՍՏ	10	16	4	1	0	31
	ՀՀ և ՀՇ	18	11	3	2	0	34
	Տեխնոլոգիական	16	13	10	1	1	41
	Տնտեսագիտական	56	54	21	13	2	146
	Ընդամենը	168	160	73	26	4	431




Նկ. 17.

Ինտերնետ ռեսուրսների առկայությունը հարցվածների 38,5%-ը գնահատել է գերազանց, 34,8%-ը գնահատել է լավ, 18,1%-ը՝ բավարար, 7,7%-ը՝ անբավարար, 0,9%-ը՝ դժվարացել են պատասխանել:

7.4. Ինտերնետ ռեսուրսների առկայությունը


		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	7	12	2	3	0	24
	ԱՇ	44	44	31	8	0	127
	Անասնաբուժական	12	10	3	2	1	28
	ԳՄ և ՍՏ	12	15	3	1	0	31
	ՀՀ և ՀՀ	20	8	4	2	0	34
	Տեխնոլոգիական	15	13	11	2	0	41
	Տնտեսագիտական	56	48	24	15	3	146
	Ընդամենը	166	150	78	33	4	431



Նկ. 18.

Ուսումնական լաբորատոր սարքավորումների առկայությունը հարցվածների 28,8%-ը գնահատել է գերազանց, 34,8%-ը՝ լավ, 22,1%-ը՝ բավարար, 11,1%-ը՝ անբավարար, 3,2%-ը՝ դժվարացել է տալ պատասխան:


7.5. Ուսումնական լաբորատոր սարքավորումների առկայությունը							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	4	11	4	4	1	24
	ԱՇ	33	45	28	16	5	127
	Անասնաբուժական	7	10	7	2	2	28
	ԳՄ և ՍՏ	10	13	6	2	0	31
	ՀՀ և ՀՇ	21	7	4	2	0	34
	Տեխնոլոգիական	10	8	15	4	4	41
	Տնտեսագիտական	39	56	31	18	2	146
	Ընդամենը	124	150	95	48	14	431



Նկ. 19.

Ուսումնական լաբորատոր նյութերի առկայությունը հարցվածների 30,4%-ը գնահատել է գերազանց, 33,2%-ը՝ լավ, 22%-ը՝ բավարար, 10,4%-ը՝ անբավարար, իսկ 4%-ը՝ դժվարացել է պատասխանել:

7.6. Ուսումնական լաբորատոր նյութերի առկայությունը							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	2	11	7	2	2	24
	ԱՇ	32	48	30	11	6	127
	Անասնաբուժական	8	7	8	4	1	28
	ԳՄ և ՍՏ	11	12	5	3	0	31
	ՀՀ և ՀՇ	19	9	4	1	1	34
	Տեխնոլոգիական	13	7	15	3	3	41
	Տնտեսագիտական	46	49	26	21	4	146
	Ընդամենը	131	143	95	45	17	431



Նկ. 20.

8.«Ինչը կոնկրետ ձեզ չի բավարարել ուսումնական գործընթացի կազմակերպման նյութատեխնիկական բազայում» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝

Ագրոնոմիական ֆակուլտետ	- Սարքավորումների սարքին չլինելը, գրեթե կիրառելի չեն դասընթացների ընթացքում, դրանց բացակայությունը, նյութերի պակասը, իսկ եթե կան, ապա հասանելի չեն բոլոր ուսանողներին: - Համակարգչային լսարանների քիչ լինելը:
Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	- Ուսումնական գործընթացի կազմակերպման նյութատեխնիկական բազայում քիչ են պրակտիկ նյութերը, տեխնիկական, համակարգիչները, որոնք հասանելի չեն ուսանողներին և որը խոչընդոտում է լիարժեք դասի գործնական պարապմունքների անցկացմանը և որի շնորհիվ ուսանողները իրենց գիտելիքները գործնականում դժվարանում են կիրառել: - Ուսումնական պրակտիկայում կան բացթողումներ: - Լաբորատորիաներում նյութատեխնիկական բազան չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Բարձր որակավորում ունեցող դասախոսական կազմը դասը անցկացնում է աղքատիկ դարը ապրած լաբորատորիաներում: - Գրադարաններում մասնագիտացված գրքերը շատ դեպքերում հայերեն տարբերակով չկան և եթե կան, ապա շատ քիչ են և ուսանողներին չեն տալիս:


Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ	▪ Ուսումնական գործընթացի կազմակերպման համար լավ կլիներ, որ լաբորատորիաները լինեին ավելի ժամանակակից, գործ ունենային մասնագիտությանը վերաբերող գործիքների, ժամանակակից սարքավորումների հետ: Համակարգիչների տեխնիկական վիճակը կարելի է բարելավվել:
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	▪ Ուսումնական գործընթացի կազմակերպման նյութատեխնիկական բազայում թերի է լաբորատորիաների հագեցվածությունը, չկան համապատասխան նյութեր և սարքավորումներ գործնական աշխատանքներ կատարելու համար, թերի է մասնագիտական գրականությունը: ▪ Պրակտիկաների անցկացման կարգը, որակը կարելի է բարելավվել: ▪ Համացանցի հետ գործողություններ կատարելը շատ դժվար է իրականացվում: ▪ Ծրագրային գիտելիքներ քիչ են տրվում: ▪ Լսարանները գտնվում են վատ վիճակում, կահավորված չեն:
Տնտեսագիտական ֆակուլտետ	▪ Ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ չի բավարարել համակարգչային տեխնիկայի և համապատասխան ռեսուրսների առկայությունը: ▪ Նյութատեխնիկական բազան թերի է, լսարանները՝ հին կահավորանքով, ցածր է տեխնոլոգիական հագեցվածությունը, մասնագիտական լաբորատորիաների բացակայությունը: ▪ Մասնագիտական գրականությունը թերի է, իսկ եթե կա, ապա հին է: ▪ Ցանկալի կլիներ, որ դասաժամերին ուսանողների թվաքանակի ստուգում չլինի և ուսուցումը կազմակերպվի միջազգային չափանիշներին համապատասխան՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցված լսարաններ: ▪ Մասնագիտական ծրագրերի ոչ բավարար ուսուցանումը:

ԳՄ և ԱՏ ֆակուլտետ	▪ Լսարանները եղել են չվերանորոգված, վատ կահավորված և մաքրությունը ապահովված չի եղել: ▪ Եղել է մասնագիտական լսարանների պակաս: ▪ Լաբորատորիաների հագեցվածությունը թերի է, կարելի է եղածը թարմացնել, շատ հին են սարքավորումները, այդ պատճառով փորձերն ամբողջությամբ չեն կատարվում: ▪ Եղել է մասնագիտական գրականության խնդիր:
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ	▪ Լաբորատորիաների թերի հագեցվածության պատճառով փորձեր չեն կատարվել, որը խոչընդոտ է հանդիսանում գիտելիքների ձեռք բերմանը, փորձաքննություն անցկացնելու ժամանակ չկան անհրաժեշտ սարքավորումները, նյութերը բացակայում են: Լսարաններում ոչ բավարար պայմանները նույնպես խանգարել են ուսուցմանը: Բացակայությունների լրացումը ևս խնդիր է և կարելի է վերանայել այն փաստը, երբ տեսոր գրելու դեպքում չի վերականգնվում կրեդիտը: ▪ Կուրսային աշխատանքները թույլատրել համակարգչով կատարել: ▪ Ուսումնական պրոցեսում գիտատեխնիկական առաջընթացի ներդրման մակարդակը շատ ցածր է: ▪ Գրադարանը հարստացնել միջազգային գրականությամբ, ինչպես նաև մասնագիտական գրականությունով: ▪ Նյութատեխնիկական բազան համալսարանում շատ հին է: ▪ Համալսարանում առկա է համակարգիչների խնդիր, երբ 2-3 ուսանող միաժամանակ օգտվում է մեկ համակարգչից:

**❖ ԱՊԱԳԱ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱԱՀ-ՈՒՄ ԱՆՑԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻՆ**

«Ապագա մասնագիտության համապատասխանությունը ՀԱԱՀ-ում անցած պրակտիկաներին» հարցին հարցվածների 35,5%-ը գնահատել է գերազանց, 40,7%-ը՝ լավ, 14%-ը՝ բավարար, 7,7%-ը՝ անբավարար, 2,1%-ը՝ դժվարացել է պատասխանել:

9. Գնահատե՞ք ապագա մասնագիտության համապատասխանությունը ՀԱԱՀ-ում անցած պրակտիկաներին							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	4	14	5	1	0	24
	ԱՇ	40	56	20	9	2	127
	Անասնաբուժական	9	12	4	2	1	28
	ԳՄ և ՍՏ	10	16	3	2	0	31
	ՀՀ և ՀՇ	25	5	2	2	0	34
	Տեխնոլոգիական	16	17	0	8	0	41
	Տնտեսագիտական	49	55	26	9	6	145
	Ընդամենը	153	175	60	33	9	430



Նկ. 21.

❖ ՀԱԱՀ-Ի ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


ՀԱԱՀ-ի սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքի գնահատման հարցին, որի մեջ մտնում են հանրակացարանները, մարզադահլիճները և ուսանողական պոլիկլինիկան, հարցվածների 20,4%-21,9%-ը գնահատել է գերազանց, 25,8%-27,4%-ը՝ լավ, բավարար է գնահատել հանրակացարաններին՝ 22,3%-ը, ուսանողական պոլիկլինիկային՝ 24,4%-ը, իսկ մարզադահլիճներին՝ 31,1%-ը, անբավարար է գնահատել ուսանողական պոլիկլինիկան և հանրակացարանը՝ 10,2%-10,7%-ը, իսկ մարզադահլիճները՝ 16,7%-ը: Մարզադահլիճների վիճակը դժվարացել են գնահատել 4,4%-ը, ուսանողական պոլիկլինիկային՝ 16,7%-ը, իսկ հանրակացարաններին՝ 19,5%-ը (աղյուսակներ 10.1., 10.2., 10.3.):

10. Ինչպես եք գնահատում ՀԱԱՀ-ի սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքը

10.1. Հանրակացարանները

		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	0	9	7	0	8	24
	ԱՇ	21	27	31	8	40	127
	Անասնաբուժական	5	8	9	3	3	28
	ԳՄ և ՍՏ	6	13	6	3	3	31
	ՀՀ և ՀՇ	18	9	3	2	2	34
	Տեխնոլոգիական	7	10	16	4	4	41
	Տնտեսագիտական	36	35	24	26	24	145
	Ընդամենը	93	111	96	46	84	430

Գնահատեք համալսարանի հանրակացարանների ընդհանուր վիճակը




Նկ. 22.

10.2. Մարզադահլիճները


		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	0	7	12	4	1	24
	ԱՇ	24	23	53	18	9	127
	Անասնաբուժական	5	13	7	1	2	28
	ԳՄ և ՍՏ	5	14	7	5	0	31
	ՀՀ և ՀՇ	17	10	4	3	0	34
	Տեխնոլոգիական	5	10	13	11	2	41
	Տնտեսագիտական	32	41	38	30	5	146
	Ընդամենը	88	118	134	72	19	431

Գնահատեք մարզադահլիճների ընդհանուր վիճակը



Նկ. 23.

10.3.Ուսանողական պոլիկլինիկան							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	1	7	7	1	8	24
	ԱՇ	23	30	33	8	33	127
	Անասնաբուժական	5	10	5	3	5	28
	ԳՄ և ԱՏ	5	12	7	4	3	31
	ՀՀ և ՀՇ	16	12	4	1	1	34
	Տեխնոլոգիական	7	9	12	7	6	41
	Տնտեսագիտական	37	35	37	20	16	145
	Ընդամենը	94	115	105	44	72	430



Նկ. 24.

11.«Ինչ կոնկրետ ձեզ չի բավարարել սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքում» հարցին շրջանավարտների կողմից տրվել են հետևյալ պատասխանները՝

Ագրոնոմիական ֆակուլտետ	- Մարզադահլիճների և հանրակացարանի խնդիրը: Անհրաժեշտ մարզական սարքավորումների բացակայությունը: - Ուսանողական պոլիկլինիկայի առկայության մասին տեղեկատվությունը և հասանելիությունը: - Համալսարանի գույքը բավականին հին է, իսկ լսարաններն հիմնականում ունեն վերանորոգման կարիք: - Ուսման վարձերը չեն գեղջվել:
Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	Ուսանողներին սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքում չի բավարարել սանհանգույցների անմխիթար վիճակը, լսարանների ոչ բարվոք վիճակը, գույքի ոչ պատշաճ տեսքը և հարմարեցվածությունը դասապրոցեսին, ոչ օպտիմալ ջեռուցումը: Նշված թերությունները զգալի կերպով արտահայտված են հատկապես 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասնաշենքերում:

Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ	▪ Ուսանողական կենսաթոշակը շատ ցածր է: ▪ Մարգադահլիճը փոքր է: ▪ Հանրակացարանում բացակայում են տարրական պայմանները:
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	▪ Սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքում չի բավարարել սանհանգույցների հիգիենիկ պայմանները՝ դրանք գտնվում են ոչ բարվոք վիճակում, ▪ մարգադահլիճների պայմանները, ▪ անհրաժեշտ ռեսուրսները կամ հին են, կամ էլ բացակայում են :
Տնտեսագիտական ֆակուլտետ	▪ Սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքում չի բավարարել սանհանգույցների, մարգասրահների անմխիթար վիճակը, ▪ հիգիենիկ պայմանները, ▪ ուսանողական պոլիկլինիկայի բացիթողի աշխատանքը և ոչ հետևողական հետազոտությունները: ▪ Ձմռանը ջեռուցումը իրականացվում է անբավարար կերպով, լսարանների մաքրությունը ապահովված չէ, և գույքը շատ հին է: ▪ Լսարաններում կա համակարգիչների խնդիր, ▪ մարգադահլիճները, հանրակացարանը, ուսանողական պոլիկլինիկան հագեցված չեն ժամանակակից սարքավորումներով, ▪ սանհանգույցներում բացակայում են որոշ անհրաժեշտ պարագաներ: ▪ Ցանկալի կլիներ լուծել միջանցքներում ծխելու խնդիրը:
ԳՄ և ՄՏ ֆակուլտետ	▪ Ցանկալի կլինի հնարավորություն ունենալ որպես ուսանող օգտվել բժշկական ծառայությունից՝ ուսանողական պոլիկլինիկայում: ▪ Մասնագիտական լսարանները հագեցնել նորագույն տեխնոլոգիաներով: ▪ Մարգադահլիճների հագեցվածությունը թերի է: ▪ Կարելի է մեծացնել պոլիկլինիկայի, համալսարանում լսարանների և միջանցքների մաքրության հսկողությունը: ▪ Ձմռանը ջեռուցումը շատ վատ է լսարաններում:
Ագրոբիզնեսի և	▪ Սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքում կարելի է

**շուկայաբանության
ֆակուլտետ**

ուշադրություն դարձնել սանհանգույցների սանիտարա-
հիգենիկ պայմաններին:

- Համալսարանը՝ լսարանները, մարզադահլիճները վերա-
նորոգման և ժամանակակից տեխնիկայով, սարքավո-
րումներով հագեցվածության կարիք ունի:
- Մարզադահլիճներում անհրաժեշտ է հանդերձասրահներ
կառուցել:
- Հանրակացարանի և ուսանողական պոլիկլինիկայի պայ-
մանները նույնպես չեն բավարարում, պոլիկլինիկայում
անհրաժեշտ է աշխատանքային գրաֆիկ սահմանել և
լինել հետևողական:


❖ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ և ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ

«Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի պրոֆեսորադասախոսական
կազմի որակավորման մակարդակը» հարցին հարցվածների 43,8% պատասխանել է
գերազանց, 49%-ը՝ լավ, 6,5%-ը՝ բավարար, իսկ 0,7%-ը՝ անբավարար:

12. Պրոֆեսորադասախոսական կազմ և դասավանդում

**12.1. Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի
որակավորման մակարդակը**

		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	7	15	2	0	24
	ԱՇ	57	62	8	0	127
	Անասնաբուժական	20	7	1	0	28
	ԳՄ և ԱՏ	10	17	3	1	31
	ՀՀ և ՀՇ	25	7	2	0	34
	Տեխնոլոգիական	17	23	1	0	41
	Տնտեսագիտական	53	80	11	2	146
	Ընդամենը	189	211	28	3	431




Նկ. 25.

«Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի դասավանդման մակարդակը» հարցին պատասխանածների 36,4%-ը գնահատել է գերազանց, 49%-ը՝ լավ, 12,1%-ը՝ բավարար, 2,3%-ը՝ անբավարար, իսկ 0,2%-ը դժվարացել է գնահատել:

12.2. Ինչպես կգնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի դասավանդման մակարդակը

		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ազդրոնովիական	3	17	4	0	0	24
	ԱՇ	50	59	18	0	0	127
	Անասնաբուժական	18	7	2	1	0	28
	ԳՄ և ԱՏ	9	17	3	2	0	31
	ՀՀ և ՀՀ	20	10	4	0	0	34
	Տեխնոլոգիական	10	26	3	2	0	41
	Տնտեսագիտական	47	75	18	5	1	146
	Ընդամենը	157	211	52	10	1	431



Նկ. 26.

13. «Ինչը կոնկրետ ձեզ չի բավարարել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքում» հարցին շրջանավարտների կողմից տրվել են հետևյալ պատասխանները՝


Ագրոնոմիական ֆակուլտետ	▪ Դասախոսները դժվարանում են օբյեկտիվ գնահատել և անուշադիր են ուսանողների հանդեպ: ▪ Պրոֆեսորադասախոսական կազմը պետք է համալրել երիտասարդ կադրերով: ▪ Որոշ դասախոսներ թերի են կատարում իրենց աշխատանքը:
Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	▪ Այս ֆակուլտետի ուսանողները շնորհակալություն են հայտնում իրենց դասավանդած պրոֆեսորադասախոսական կազմին մեծ մարդկային վերաբերմունքի, անմիջական մոտեցման և իրենց մատչելի ձևով գիտելիքների մատուցման համար: ▪ Պրոֆեսորադասախոսական կազմը տիրապետում է բարձր գիտելիքների, բանիմաց դասախոսներ են, սակայն ժամանակակից մեթոդոգիային տիրապետում են քիչ դասախոսներ:
Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ	▪ Պրոֆեսորադասախոսական կազմը հիմնականում տարիքով է, որը արդի տեղեկատվությամբ զինված չէ, ▪ ցանկալի է պրոֆեսորադասախոսական կազմը համալրել երիտասարդ կադրերով, իսկ ընդհանուր տրված գիտելիքներից ուսանողները բավարարված են:
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	▪ Պրոֆեսորադասախոսական կազմի շնորհիվ ձեռք են բերել գիտելիքների պաշար, սակայն կան դասախոսներ, որոնք չունեն համապատասխան գիտելիքներ դասավանդելու համար:
Տնտեսագիտական ֆակուլտետ	▪ Պրոֆեսորադասախոսական կազմում կան շատ լավ մասնագետներ, սակայն ցանկալի կլինեք, որ դասավանդումը անցկացվեր ժամանակակից պայմաններին համապատասխան և դասախոսական կազմը համալրվեր երիտասարդ, բանիմաց կադրերով, քանի որ դասախոսական կազմի միջին տարիքը 70 անց է, ինչն էլ բերում է ուսման հարցում բացարձակ անտարբերության, և կան դասախոսներ, որոնք լավ չեն տիրապետում իրենց առարկային և չունեն մանկավարժական հմտություններ:

ԳՄ և ԱՏ ֆակուլտետ	▪ Պրոֆեսորադասախոսական կազմը ունի երիտասարդացման խնդիր, ▪ կարելի է տարեցներին փոխարինել երիտասարդ, բանիմաց, նորագույն տեխնոլոգիաներով դասախոսություն անցկացնող կադրերով:
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ	▪ Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման մակարդակը բարձր է և եթե ուսանողը մի փոքր հետևողական լինի, ապա կհասնի անհրաժեշտ արդյունքի, նյութը մատուցվում է մատչելի և որոշ դասախոսներ սրտացավ են, սակայն կան նաև դասախոսներ, որոնք անհետևողականություն և անտարբերություն են ցուցաբերում ուսանողի նկատմամբ: ▪ Ցանկալի է դասախոսական կազմում տարեց դասախոսներին, որոնք նյութը դժվար են ուսանողին մատուցում, փոխարինել երիտասարդ բանիմաց կադրեր: ▪ Շատ դասախոսներ բավարար մակարդակով չեն տիրապետում իրենց առարկաներին, հաճախ ներկայացվող նյութը լինում է հնացած, հին գրականությունից, հաշվի չառնելով ներկայիս պայմանները, իրավիճակները և կեցության աստիճանը: ▪ Գործնական պարապմունքները երբեմն ոչ արդյունավետ են լինում և անհետաքրքիր:

❖ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ գիտելիքների գնահատման համակարգը» հարցին հարցվածների 32.71%-ը գնահատել է գերազանց, 53.83%-ը՝ լավ, 12.06%-ը՝ բավարար, 1.16%-ը՝ անբավարար, և ընդամենը 0.23%-ը դժվարացել է պատասխանել տվյալ հարցին:

14. Ինչպես կգնահատեք ընդհանուր առմամբ գիտելիքների գնահատման համակարգը							
		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	ԴՊ	Ընդամենը
Ֆակուլտետ	Ագրոնոմիական	3	16	4	1	0	24
	ԱՇ	37	72	18	0	0	127
	Անասնաբուժական	12	15	1	0	0	28
	ԳՄ և ԱՏ	8	18	4	1	0	31
	ՀՀ և ՀՇ	21	11	1	1	0	34
	Տեխնոլոգիական	13	24	3	0	1	41
	Տնտեսագիտական	47	76	21	2	0	146
	Ընդամենը	141	232	52	5	1	431



Նկ. 27.

15. «Ինչ կցանկանայիք, որ փոխվեր ուսանողների գիտելիքների գնահատման համակարգում» հարցին շրջանավարտների կողմից տրվել են հետևյալ պատասխանները՝

Ագրոնոմիական ֆակուլտետ	- Քննությունների հանձնումը իրականացվի բանավոր ձևով և փոխվի գնահատման սանդղակը: - Բացականների լրացումը հանել և միջանկյալ քննությունները կրճատել: - Ուսման տևողությունը լինի 4 տարի և վերջում հանձնել 1 պետական քննություն կամ դիպլոմային աշխատանք:
Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	- Դասընթացները դարձնել ավելի հետաքրքիր: Քննությունները ցանկալի կլինի անցկացնել բանավոր, որի շնորհիվ էլ ավելի կբարելավվի ուսանողի խոսքը: - Կրեդիտային համակարգով ուսանողին տրված տոկոսը հենց սկզբից վերածվի թվանշանի:
Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ	- Գնահատման համակարգը լինե 5 բալային: - Ցանկալի կլինի, որ բացակայությունները հաշվի չառնեին: - Գնահատումը կատարվեր ավելի օպտիմալ և ռեալ: - Ուսումնական ծրագիրը ավելի ժամանակակից լինի:
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	- Գծագրերը ձեռքով գծելու փոխարեն այն գծել համակարգչով: - Բացակայությունների լրացման դեպքում ցանկալի է կրեդիտները չհանել: - Քննությունները ցանկալի է դարձնել բանավոր: - Գնահատելիս դասախոսները լինեին ավելի արդար:
Տնտեսագիտական ֆակուլտետ	Ցանկալի կլինե քննությունների հանձնումը կատարվեր բանավոր, գնահատումը կատարվեր օբյեկտիվ, ոչ թե

	սուբյեկտիվ, ելնելով ուսանողի բացակայությունների քանակից, երբ այն լրացնելու դեպքում գնահատականի նիշը ևս իջնում է, հաշվի առնելին կրեդիտային համակարգի առանձնահատկությունները: ▪ Գնահատումը լինել 100 բալանի սանդղակով ոչ թե 20: ▪ Կուրսային նախագծերը, դիպլոմային աշխատանքները լինեն համակարգչային շարվածքով: ▪ Ցանկալի կլիներ, որ քննությունները անցկացվեին համակարգչային ծրագրի միջոցով, և նյութերը անցկացվեին ոչ միայն տեսական մեթոդով, այլ նաև կիրառական: ▪ Կրեդիտային համակարգը լիարժեք ցույց չի տալիս գիտելիքների մակարդակը:
ԳՄ և ԱՏ ֆակուլտետ	▪ Ցանկալի է փոխել քննությունների ձևը և կրեդիտային համակարգը:
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ	▪ Ցանկալի կլինի, որ քննությունները անցկացվեն բանավոր՝ խոսքը ավելի զարգացնելու նպատակով կամ թեստային համակարգով՝ նորարարական տեխնոլոգիայի կիրառումով: ▪ Ցանկալի կլինել նաև դասախոսները գնահատելին օբյեկտիվ, գնահատումը լինել 5 բալանի համակարգով, փոխվել բացականները լրացնելու կարգը, որի արդյունքում վերականգնվել կորցրած կրեդիտները:

3. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1-ին կուրսի ուսանողների շրջանում հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

- որպես տեղեկատվության աղբյուր հիմնականում ուսանողները նշում են ծնողներին, համալսարանում սովորող ուսանողներին, համալսարանի ներկայացուցիչներին:
- *մասնագիտությունների, ընդունելության և ուսուցման պայմանների վերաբերյալ* 1-ին կուրսեցիները, որպես դիմորդ, հիմնականում տեղեկացել են համալսարանի կայք էջից,
- փաստաթղթերի ընդունման գործընթացը հիմնականում գնահատել են գերազանց և լավ,
- 1-ին կուրսեցիների մեծ մասը (400 ուսանող) առաջին հայտով նշել են ՀԱԱՀ-ը,
- հարցվածների մեծ մասը ընտրել է ՀԱԱՀ-ը, քանի որ նրանց դուր են գալիս գյուղատնտեսական ոլորտի մասնագիտությունները:

Բակալավրի շրջանավարտների շրջանում հարցման արդյունքում ստացված տվյալները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

- Ուսանողները ստացել են բավարար մասնագիտական գիտելիքներ և կարողություններ, սակայն նրանց կողմից նշվել են տարբեր խնդիրներ, որոնք բերված են ստորև:

Շրջանավարտների շրջանում անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ շրջանավարտները ավելի շուտ բավարարված չեն՝

Ուսումնական գործընթացի կազմակերպման նյութատեխնիկական բազա	▪ լսարանային հագեցվածությունից, ▪ համակարգչային սենյակների սակավությունից և համակարգիչներով հագեցվածությունից, ▪ համակարգչային լսարաններում հին համակարգիչների առկայությունից, ▪ լաբորատոր լսարաններում մասնագիտական սարքավորումների հին լինելուց, լաբորատոր նյութերի քիչ լինելուց, ▪ լաբորատորիաներում նյութատեխնիկական բազայի անհամապատասխանությունից ժամանակակից պահանջներին:
սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքում	▪ մարզադահլիճների և հանրակացարանի ընդհանուր վիճակից և հագեցվածությունից տարբեր միջոցներով, ▪ ուսանողական պոլիկլինիկայի անհրաժեշտ միջոցներով հագեցվածության պակասից,

	▪ սանհանգույցների անմիջիցսար վիճակից, ▪ ջեռուցման համակարգի վատ աշխատանքից, ▪ սանիտարահիգիենիկ պայմաններից:
Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքում նշվել են հետևյալ խնդիրները	
	▪ ծերացող պրոֆեսորադասախոսական կազմի խնդիրը, ▪ մեծամասամբ ոչ ժամանակակից տեխնոլոգիաներով դասավանդման խնդիրը, ▪ որոշ դեպքերում գործնական և լաբորատոր պարապմունքների անարդյունավետ կազմակերպումը (որոշ ֆակուլտետներում):
Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի վերաբերյալ նշվել են հետևյալ առաջարկությունները	
	▪ գիտելիքների գնահատման ձևերը (առաջարկվում է գրավոր քննություններից անցնում կատարել բանավոր քննությունների), ▪ գիտելիքների գնահատման սանդղակը դարձնել առավել օբյեկտիվ, ▪ բացակայությունների լրացման դեպքում կրեդիտները չհանել:

Առաջարկություններ՝

- վերազինել լաբորատոր լսարանները նոր նյութատեխնիկական միջոցներով՝ հաշվի առնելով ամբիոններին տրամադրվող միջոցների առաջնահերթությունը,
- թարմացնել համակարգչային լսարանները նոր համակարգիչներով՝ բյուջետային և արտաբյուջետային միջոցներով,
- կազմակերպել վերապատրաստումներ դասախոսական կազմի շրջանում՝ նոր կրթական տեխնոլոգիաներին ամբողջությամբ տիրապետելու նպատակով,
- վերանայել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը, դարձնելով այն առավելագույնս օբյեկտիվ գնահատման գործիք,
- վերանայել գործնական պարապմունքների թեմաները՝ ուսանողների մոտ խորը գործնական հմտություններ զարգացնելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Առաջին կուրսի ուսանողների կարիքների գնահատման

հարցաթերթ

Միջոցի 1-ին կուրսեցի, կրթական միջավայրի բարելավման և տեղեկատվության աստիճանի բարձացման նպատակով Հայաստանի ազգային ազրարային համալսարանը, ի դեմս ՈԻսումնամեթոդական կենտրոնի ԿԲՌՊՆՏ բաժնի իրականացնում է ձեր կարիքների ուսումնասիրում և գնահատում:

Խնդրում ենք Ձեզ մասնակցել այս հարցմանը: Ձեր տվյալները անանուն են և չեն տարածվելու, ստացված արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրացված, վիճակագրական տվյալների ձևով:

Նախապես հայտնում ենք մեր երախտագիտությունը Ձեր տրամադրած ժամանակի և ցուցաբերած անկեղծության համար:

Պատասխանելով հարցման թերթիկի հարցերին ընտրեք այն պատասխանները, որոնք համապատասխանում են Ձեր կարծիքին:

Խնդրում ենք նշել Ձեր սեռը	Արական ☐	Իգական ☐
Խնդրեմ ենք նշել Ձեր ծննդյան տարեթիվը		
Խնդրեմ ենք նշել Ձեր ֆակուլտետը		
Խնդրեմ ենք նշել Ձեր մասնագիտությունը		

1	Խնդրում ենք նշել, ո՞ր տարածաշրջանի ո՞ր դպրոցից եք եկել սովորելու	
2	Խնդրում ենք նշել, տեղեկատվության ի՞նչ աղբյուրներից եք իմացել համալսարանի մասին	
☐	Դպրոցի գովազդային ցուցափեղկից	
☐	Թերթերի գովազդային տեղեկատվությունից	
☐	Ծանոթներից	
☐	Համալսարանի ներկայացուցչից	
☐	Համալսարանում սովորող ուսանողներից	
☐	Համալսարանի կայք էջից	
☐	Այլ (գրել բառերով)	
3	Մասնագիտությունների, ընդունելության ու ուսուցման պայմանների մասին որ տեղեկատվական աղբյուրներից եք իմացել	
☐	Համալսարանի կայք էջից	
☐	Ընդունող հանձնաժողովից	
☐	Ֆակուլտետների դեկաններից	
☐	Այլ աղբյուրից (գրել բառերով)	

4	Խնդրում ենք գնահատել փաստաթղթերի ընդունման գործընթացի արդյունավետությունը	1 գերազանց	2 լավ	3 բավարար	4 անբավարար	ԴՊ (դժվարանում եմ պատասխանել)
	Փաստաթղթերի ընդունման կազմակերպում					
	Ընդունող հանձնաժողովի անդամների կողմից վերաբերմունքը Ձեր նկատմամբ					
5	Խնդրում ենք նշել, թե առաջին հայտով ո՞ր համալսարանն էք դիմել					
☐	ՀԱԱՀ					
☐	Այլ բուհ (խնդրում ենք մանրամասնել)					
6	Խնդրում ենք նշել, թե ինչո՞ւ եք որոշել սովորել ՀԱԱՀ-ում					
☐	Համալսարանը բնակավայրին մոտ է գտնվում					
☐	Համալսարանում տալիս են բարձրորակ կրթություն					
☐	Ծնողներն են որոշել					
☐	Գյուղատնտեսական ոլորտի մասնագիտությունով ուսուցման համար					
☐	Համալսարանում կան մասնագիտություններ, որոնք հետաքրքրում են ինձ					
☐	Վարձավճարը ավելի ցածր է					
☐	Ավելի հեշտ է ընդունվել, քան այլ համալսարան					
☐	Այլ պատճառ (գրեք բառերով)					
7	Խնդրում եմ նշեք, թե ինչո՞ւ եք ընտրել այն մասնագիտությունը, որտեղ ընդունվել եք					
☐	Մասնագիտությունը հեղինակավոր է					
☐	Ծնողներն են խորհուրդ տվել					
☐	Մասնագիտությունը թույլ է տալիս բարձր վարձատրվող աշխատանք ունենալ					
☐	Ծանոթներս են խորհուրդ տվել					
☐	Ավելի հեշտ է եղել հանձնել ընդունելության քննությունները					
☐	Այլ պատասխան (գրել բառերով)					
8	Համալսարանում Ձեզ ի՞նչն է դուր գալիս					
☐	Դասավանդողները					
☐	Պարապմունքների անցկացման ձևը					
☐	Համալսարանի ծառայությունները					
☐	Համալսարանի դրվածքը					
☐	Այլ (գրել բառերով)					
9	Ուսուցման ավարտին ի՞նչ կուզենայիք ստանալ					
☐	Տվյալ մասնագիտությամբ աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքներ					
☐	Ուղղակի դիպլոմ					
☐	Ապագայում աշխատանք ունենալու հնարավորություն					
☐	Այլ (գրել բառերով)					

10	Արդյոք կարևորո՞ւմ եք համալսարանում սովորելիս հանրակացարանի առկայության խնդիրը
☐	Այո
☐	Ոչ
11	Արդյոք հասանելի՞ է ձեզ ՀԱԱՀ ընդունվելու և սովորելու վերաբերյալ ինֆորմացիան
☐	Այո
☐	Ոչ
12	Խնդրում եմ գնահատել, թե համալսարան ընդունվելիս տեղեկատվության ո՞ր ձևն է եղել ավելի արդյունավետ
☐	Գովազդը հեռուստացույցով
☐	Տեղեկատվությունը թերթերի միջոցով
☐	Համացանցի տեղեկատվությունը
☐	Համալսարանի կայքի տեղեկատվությունը
☐	Համալսարանի կողմից կազմակերպվող բաց դռների օրը
☐	Համալսարանի ներկայացուցչի հետ հանդիպումը ձեր դպրոցում

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

AQ Շրջանավարտների կարիքների գնահատման հարցաթերթ

Հարգելի շրջանավարտ, նպատակ ունենալով Համալսարանում բարելավել կրթական միջավայրը և կրթության որակը, Ուսումնամեթոդական կենտրոնը՝ ի դեմս ԿԲՌՊՆՏ բաժնի, իրականացնում է շրջանավարտ-ների կրթական կարիքների գնահատում:

Խնդրում ենք Ձեզ մասնակցել այս հարցմանը: Ձեր տվյալները չեն տարածվելու և ստացված արդյունքներն օգտագործվելու են միայն ընդհանրացված, վիճակագրական տվյալների ձևով:

Նախապես հայտնում ենք մեր երախտագիտությունը Ձեր տրամադրած ժամանակի և անկեղծության համար:

S1	Նշեք Ձեր սեռը	Արական	☐	Իգական	☐
S2	Նշեք Ձեր ծննդյան թիվը				
S3	Նշեք մասնագիտությունը ըստ դիպլոմի				
S4	Ուսուցումը ավարտելու տարին				

1. Ի՞նչ չափով եք բավարարված ՀԱԱՀ-ի կողմից տրված կրթությունից	Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ (դժվարանում եմ պատասխանել)
	☐	☐	☐	☐	☐

2. Խնդրում ենք 1-ին հարցը մեկնաբանել (բառերով)

3. Որքանով եք բավարարված ստացված տեսական գիտելիքներից	Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ
3.1. Տեսական գիտելիքների արդիականությամբ	☐	☐	☐	☐	☐
3.2. Տեսական գիտելիքների համապատասխանությամբ ստացվող որակավորմանը	☐	☐	☐	☐	☐
3.3. Տեսական գիտելիքների կիրառման կարողությամբ մասնագիտական գործունեության մեջ	☐	☐	☐	☐	☐

4.Որքանով եք բավարարված գործնական պատրաստվածությամբ ուսումնառության ընթացքում	Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ
4.1. Գործնական հմտությունների արդիականությամբ	☐	☐	☐	☐	☐
4.2. Որակավորման համապատասխանությամբ աշխատանքային պահանջներին	☐	☐	☐	☐	☐
4.3. Գործնական խնդիրների ինքնուրույն լուծման կարողությամբ	☐	☐	☐	☐	☐
5.Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ձևավորված անձնային և մասնագիտական որակներից	Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ
5.1. Ինքնակազմակերպման հմտությամբ	☐	☐	☐	☐	☐
5.2. Գործունեության ինքնակրթման և վերլուծության ձգտումով	☐	☐	☐	☐	☐
6.Որքանով եք բավարարված ուսումնառության ընթացքում ստացված լրացուցիչ գիտելիքներից	Ամբողջությամբ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված եմ	Ավելի շուտ բավարարված չեմ	Բավարարված չեմ	ԴՊ
6.1. Ինովացիոն մեթոդների և տեխնոլոգիաների տիրապետումով	☐	☐	☐	☐	☐
6.2. Տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետումով	☐	☐	☐	☐	☐
6.3. Լեզվական կարողությունների դրսևորումով	☐	☐	☐	☐	☐
6.4. Ընդհանուր օրենսդրական, տնտեսագիտական գիտելիքներով	☐	☐	☐	☐	☐
7. Ինչպես եք գնահատում ուսումնական գործընթացի կազմակերպման նյութատեխնիկական բազան	4 գերազանց	3 լավ	2 բավարար	1 անբավարար	ԴՊ
7.1. Մասնագիտության կրթական ծրագրի իրականացման ընդհանուր միջին գնահատական (կրթական ծրագրեր, լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաններ, ուսումնառության այլ ռեսուրսներ)	☐	☐	☐	☐	☐

7.2. Գրականության առկայությունը գրադարաններում	☐	☐	☐	☐	☐
7.3. Համակարգիչների առկայությունը	☐	☐	☐	☐	☐
7.4. Ինտերնետ ռեսուրսների առկայությունը	☐	☐	☐	☐	☐
7.5. Ուսումնական լաբորատոր սարքավորումների առկայությունը	☐	☐	☐	☐	☐
7.6. Ուսումնական լաբորատոր նյութերի առկայությունը	☐	☐	☐	☐	☐

8. Ինչը կոնկրետ ձեզ չի բավարարել ուսումնական գործընթացի կազմակերպման նյութա-տեխնիկական բազայում (գրել բառերով)

	4 գերազանց	3 լավ	2 բավարար	1 անբավարար	ԴՊ
9. Գնահատե՞ք ապագա մասնագիտության համապատասխանությունը ՀԱԱՀ-ում անցած պրակտիկաներին	☐	☐	☐	☐	☐
10. Ինչպե՞ս ե՞ք գնահատում ՀԱԱՀ-ի սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքը	4 գերազանց	3 լավ	2 բավարար	1 անբավարար	ԴՊ
10.1. Հանրակացարանները	☐	☐	☐	☐	☐
10.2. Մարզադահլիճները	☐	☐	☐	☐	☐
10.3. Ուսանողական պոլիկլինիկան	☐	☐	☐	☐	☐

11. Ինչ կոնկրետ ձեզ չի բավարարել սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքում (գրել բառերով)

12. Պրոֆեսորադասախոսական կազմ և դասավանդում	4 գերազանց	3 լավ	2 բավարար	1 անբավարար	ԴՊ
12.1. Ինչպես կզնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման մակարդակը	☐	☐	☐	☐	☐
12.2. Ինչպես կզնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի դասավանդման մակարդակը	☐	☐	☐	☐	☐

13. Ինչը կոնկրետ ձեզ չի բավարարել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքում

Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգ	4 գերազանց	3 լավ	2 բավարար	1 անբավարար	ԴՊ
14. Ինչպես կգնահատեք ընդհանուր առմամբ գիտելիքների գնահատման համակարգը	☐	☐	☐	☐	☐
15. Ինչ կցանկանայիք, որ փոխվեր ուսանողների գիտելիքների գնահատման համակարգում (գնահատման սանդղակ, քննությունների ձևը, այլ)					

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ